



Հավելված 2'  
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի  
09.01.2020թ. թիվ 3-Լ հրամանի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

### Նախագահի առաջին տեղակալ

### Նախագահի տեղակալ

### Ֆինանսական տնօրեն

### Աշխատակազմի ղեկավար

### ՀՊԳ ղեկավար

- Պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերությունների Պալատի (բացառությամբ ՀՊԳ հարցերի) աշխատանքների համակարգում.
- Պալատի և միջազգային կառույցների միջև հարաբերությունների համակարգում.
- Պալատի ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովում.
- Պալատի մասնակցությամբ գործերով դատական ներկայացուցչություն.
- Նորմատիվ իրավական ակտերի կամ դրանց նախագծերի վերաբերյալ Պալատի դիրքորոշումների մշակում և ներկայացում.
- Փաստաբանների նկատմամբ ներկայացված բողոքների քննարկման կազմակերպում:

- Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի (այսուհետ՝ ՀՊԳ) վերահսկողական աշխատանքների համակարգում.
- Հանրային պաշտպանի գրասենյակի հետ կապված պետական մարմինների հետ հարաբերություններում Պալատի աշխատանքների համակարգում.
- Պալատի Գիտավերլուծական կենտրոնի, Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի, Երիտասարդական խորհրդի, Մարզա-մշակութային ակումբի, Պալատի ակումբի, ինչպես նաև այլ մշտական կամ ժամանակավոր հանձնախմբերի, հանձնաժողովների, ակումբների, աշխատանքային խմբերի կամ այլ կառույցների աշխատանքների համակարգում.
- Պալատի մարզային համակարգման կազմակերպման օժանդակություն:

- Պալատի բյուջեի կառավարում.
- Պալատի ֆինանսատնտեսական միջոցների կառավարում.
- Ֆինանսական հայտերի և հաշվետվությունների կազմման և ներկայացման գործընթացի կազմակերպում.
- Մուտքավճարների, անդամավճարների և այլ վճարների հավաքագրման և արտոնությունների տրամադրման գործընթացի կազմակերպում.
- Պալատի խորհրդի ընթացիկ նիստերի (բացառությամբ կարգապահական գործերով նիստերի) սպասարկում.
- Պալատի կայքի զարգացման ապահովում:

- Պալատի աշխատակազմի ընդհանուր ղեկավարում.
- Որակավորման քննությունների կազմակերպմանը և անցկացմանն օժանդակություն.
- Փաստաբանների պարտադիր վերապատրաստման դասընթացների կազմակերպում.
- ՀՀ փաստաբանական դպրոցի հետ հարաբերությունների համակարգում:

- ՀՊԳ ընթացիկ աշխատանքների կազմակերպում.
- Հանրային պաշտպանների միջև աշխատանքի բաժանում.
- Հանրային պաշտպանություն իրականացնելու մասին որոշումների ընդունում.
- Հանրային պաշտպանների կողմից իրավաբանական օգնություն իրականացնելու որակի և ժամկետների նկատմամբ հսկողության իրականացում: